Եւրոպայում բազարանատիպ կառուցուածքների տարածման հարցի շուրջը

ԱՐՄԷՆ ԶԱՐԵԱՆ

Քրիստոնէութեան վաղագոյն շրջաններից, Հայաստանում զարգացում դտան եկեղեցական շէնքերի բազմաթիւ տիպեր։ Դ. դարի առաջին տասնամեակում, նոր կրօնը արդէն Հայաստանում պաշտօնականացուել էր։ Այդ իրաղրութիւնը հնարաւորութիւն է տալիս բացատրելու ամբողջ երկրում առկայ, նոր պաշտամունքին նուիրուած շէնքերի այդքան մեծաթիւ լինելը։ Ճարտարապետական առումով, այդ շէնքերը կիսարուել են ելնելով առանցքային նշանակութիւն ունեցող երկու տիպերից՝ բազիլիկ (Քասաղ, Տիծեռնավանք, Դուին, Երերոյք եւ այլն) եւ կեդրոնակազմ (Էջմիածին, Աւան, Արղնի, Ծովինդ, Մանկանոց, Հառիճ, Իրինդ, Բագարան)։ Երկու գլխաւոր տիպեր, որոնց հիման վրայ դասակարգւում է ձեւի հետագայ զարգացումը, առաջանում են ճարտարապետական պարզ ու բաղադրեալ կառուցուածքների տիպաբանական սերիաները։

Շէնքի տիպը հնարաւոր է բնութագրել երբ ճշգւում են ժանակագրական, պատմական տուեալները, երբ պատմական նշանակութեան հետ կարելի է դառնում մակաբերել տեսական մտածողութիւնը։ Ժողովրդի ստեղծած մշակոյթում ձեւը երբեք պատահական չէ, ոչ էլ, բառիս բուն իմաստով, օտարամուտ. նա դարերի ընթացքում կատարուած փորձի ու ճանաչողութիւնների հետեւանք է։ Հետեւաբար, եթէ արուեստի պատմութեան հիմնական նպատակներից է բացայայտել կերպարի ծագման հարցերը, ձեւի կազ-

մաւորմանը մասնակից ամենաընդհանուր օրինաչափութիւնները, այդ առթիւ անբաւարար է լոկ վերլուծական այն աշխատանքը, որ տանում են մի շարք գիտնականներ, այն պարզ նպատակով, որպէսզի պարզեն շէնքի կամ նրա տարրերի կապակցութիւնները այլ մշակոյթների հետ: Այս իմաստով, որոշ գիտնականներ մեկնաբանում են բազիլիկաների, նոյնիսկ կեդրոնակազմ կառուցուածքների առաջացումը Հայաստանում, սահմանափակուելով լուսաբանել աղդեցութիւնների այն ճանապարհները, որտեղից եւ մուտք են գործել շէնքերի այդ տիպերը (Սիրիա) որպէս նոր կրօնի հետքերով ներմուծուած կառուցուածքներ (1):

Արդ, այս թեմայի կապակցութեամբ, փորձենք առաջ քաշել ուշագրաւ մի այլ խնդիր, որը կարող է որոշ չափով նպաստել ճարտարապետական ձեւերի առաջացման հարցը պարզաբանելուն: Խնդիրը հետեւեալն է. ձեւի կազմաւորման ճանաչողութիւնը կապուած է արխետիպի դաղափարին: Արխետիպը, որպէս ձեւի անդրապատկերում կանգնած է ճարտարապետական տիպերի հիմքում, որպէս ձեւի ու մտքի կապակցութիւնների սկզբնական արտայայտութիւն, առկայ է ու հարազատ ժողովրդի ոգուն: Նա իրողութիւնը պատկերող, շարունակ վերարտադրուող, հնագոյն փորձառութիւնների մտապատկերումն է, արտայայտում է ձեւի տարրական իրողութիւնը եւ նման օրկանական մարմիններին, օժտուած է զարդանալու տինամիկ ուժով: Արտացոլում է մինչեւ ոճ դառնալու կատարելութիւնը չմշակուած ձեւի տարրական իրողութիւնը: Տիպարանական սերիաները դասաւորուած են ելնելով ճարտարապետական ձեւերին յատուկ որոշ իւրայատկութիւնների հիման վրայ, որոնք ամենապարզ ձեւով առկայ են նախատիպերի մէջ: Մինչդեռ արխետիպը ունի երբեմն երկու կամ աւելի նախատիպերին յատուկ ընդհանուր յատկանիշեր, օրինակ՝ քառասիւն, երդիքով ծածկուած քառակուսի տարածութիւնը պատկերում է դարեր շարունակ կրկնուող շինականի տունը, որը միաժամանակ կարող է արխետիպ համարուել թէ՛ Էջմիածնի Կաթողիկէի, Բագարանի եւ թէ դաւիթների տիպերի համար: Արխետիպի էութեան առանձնայատկութիւնները կարող են երկարատեւ ժամանակ թաքուն մնալ, կամ բացայայտուել սոցիալական ու մշակութային միջավայրի բարենպաստ աղդեցութեան շնորհիւ, ու, դրանով իսկ, արխետիպից առաջացած կազմաւորուած ձեւը, դառնալ՝ պատմական իրականութեան հարազատ արտացոլում:

---

1) A. Grabar, MARTYRIUM, Paris, 1946. A. Khatchatrian, *L'Architecture Arménienne du 4ème au 6ème siècle, Paris, 1971.*

Ստեղծագործօրէն առաւել աշխոյժ պատմական շրջաններում շէնքերի տիպարանական ընտրութիւնը կատարւում է այդ շրջանին յատուկ հասարակարգի կազմով. ձեւը ստանում է պաշտօնական հաստատում: Նման պայմաններում, սակայն, որոշ ձեւեր պահպանւում են, բայց չեն զարգանում: Օրինակ, հեթանոսական դամբարանների (վիմափոր կամ ստորգետնեայ) խաչաթեւ կազմը որպէս ճարտարապետական ամբողջացուած կերպար, զարգացում դուռ չատ աւելի ուշ՝ վաղ միջնադարում:

Կայսերական Հռոմի անկման սկզբնաշրջանում, անցեալի իտէալներ պատկերող, կեանքը խորհրդանշող, բայց քաղաքական պահանջների հետեւանքով արժէքազրկուած ճարտարապետական ձեւերը քրիստոնէութեան տարածման հետ, նոր իմաստաւորում ստացան: Ճարտարապետութեան պատմութեան համար ամենադիժուարին հարցերից է քրիստոնէական պաշտամունքային շէնքերի կազմաւորման հարցը: Ե. դարից սկսած մենք տեսնում ենք արդէն կատարելութեան հասած շէնքեր, որոնց նախապատրաստող ընթացքը, նրանց վաղագոյն փորձառութիւնները, մեզ անծանօթ են: Զեւաբանական իմաստով մեծ նշանակութիւն ունի շինարարական տեխնիկան, տեսական մտածողութիւնը, սոցիալական եւ կրօնական նշանաբանումը: Ծանօթ է, թէ ինչպէս քրիստոնէութեան վաղագոյն շրջաններում յարատեւեց հեթանոս հերոսների պաշտամունքը, կապակցութիւն հաստատուեց հերոսի պաշտամունքի ու նոր կրօնի համար զոհուած մարտիրոսի պաշտամունքների միջեւ: Մէկից միւսին անցումը կատարուեց արժէքների աստիճանական դասաւորման եղանակով, այսինքն՝ մեկնել ժառանգուածից, բարձրանալ, հասնել մինչեւ գերագոյնը: Ճարտարապետութեան բնագաւառում աստիճանաւորման եղանակը նշանակեց՝ հեթանոսական ձեւերի փոխանցումը քրիստոնէական ճարտարապետութեանը: Ժողովուրդը շարունակում էր կառուցել դամբարանները, նրանց ձեւը հաւանաբար կապուած էր արխետիպերին ու երբ տարածում գտաւ քրիստոնէութիւնը, անցեալի հերոսների պաշտամունքը միաձուլուեց նոր կրօնի մարտիրոսների պաշտամունքին, հեթանոսական յիշատակարան-դամբարանը (կեդրոնակազմ, խաչաձեւ) փոխանցուեց քրիստոնէական ճարտարապետութեանը, դարձաւ մարտիրոսների վկայարանը՝ մարթիրիոնը:

Հայաստանում, ինչպէս եւ հռոմէական աշխարհում, առաջացող նոր մշակոյթը (որը արուեստի պատմութեան համար տեւում է Գ.—Դ. մինչեւ Ե.—Զ. դարերը եւ կոչւում է ուշ անտիկ շրջան) սկիզբ առաւ արուեստի եւ շինարարական գործունէութեան լայնաշունչ

ծրագրով։ Հեթանոսական ճարտարապետութիւնից ժառանգուած ձեւերը, շինարարական արուեստի հնարաւորութիւնները չիւրացուեցին մեքենայօրէն, այլ ընդունուեցին որպէս նախադրեալ փորձառութիւններ։ Տեսական նոր մտածողութիւնը մեկնաբանօրէն շարունակեց մշակել հեթանոսական շէնքերին յատուկ տարածութեան ենթաբաժանումների ինչպէս եւ ծաւալային կերպարի կազմը, մղելով զարգացումը մինչեւ այդ ձեւերում, ամփոփուած հնարաւորութիւնների ամբողջական բացայայտումը։

Հռոմէական կայսրութեան ուշ շրջանում զարգացում գտած գմբէթածածկ շրջանաձեւ յատակագծով, կեդրոնից հիմնական ուղղութիւնները ճառագայթող քառանկիւնի կամ կիսաշրջանակաձեւ աբսիդներով դամբարանները՝ Տոր տէ Սկիավի, Տոր Պինյատարա (Հռոմ), Տորրոնէ (Դիվոլի), Դիոկղիտիանոսի դամբարանը (Սպալատո), եղան Ե. դարից մինչեւ ԺԲ. դարը (վերացուցին Տրենտոյի ժողովի (16րդ դ.) որոշումով) Եւրոպայում կառուցուած մկրտարանների նախատիպերը։ Մկրտարանը որպէս առանձին շէնք, ունեցել է ընդհանրացած տարածում, կիրառուել է զարգացնելով հիմունքային նշանակութիւն ունեցող երեք տիպ՝

– Շրջանակաձեւ, Նոշերա (Զ. դ.),

– Քառանիստ, ութանկիւնի ծածկ, Սոտերօ (Նեոպոլ, Ե.դ.),

– Ութանիստ։ Շատ տարածուած ձեւ, նաեւ այն բանի հետեւանքով, որ աւելի յարմարաւէտ էր արարողութիւններին։ Միաժամանակ ունէր տիեզերաբանական նշանակութիւն։

Լատերանեան մկրտարանը (վերամշակուած Ե. դ.), Օրթոտոքսների եւ Արիանների մկրտարանը (Ռավեննա), Ս. Եղիա (Էդրա, Սիրիա 532 թ.) եւ ԺԱ.–ԺԲ. դարերի Ֆլորենցիայի, Պիզայի, Պարմայի, Պարենցոյի մկրտարանները օրինակներ են, որոնց միջոցով յարատեւեց յատկապէս կեդրոնակազմ կառուցուածքը։

Ճարտարապետական առումով, եկեղեցու կերպարը նախատիպերի միջոցով մի ուղղութեամբ կապուած է ստորգետնեայ եւ վիմափոր սրահներին, այսինքն, կտոնեան կուլտին պատկանող կառուցուածքներին, միւս ուղղութեամբ Օլիմպիական էակների գերդաստանի հերոսների պաշտամունքային, ինչպէս օրինակ Հայաստանում կեդրոնակազմ տաճարը կամ բազիլիկան Եւրոպայում, որը յարատեւեց, վերամշակուեց դառնալով ռոմանական ու կոթական ոճերի հիմնական ձեւը։

Դամբարանից եկեղեցի փոխանցմանը նպաստեց նոր հաւատքը. մահը ու կեանքը այլեւս իրարամերժ երեւոյթներ չէին, այլ մէկից միւսին անցնող ընթացք։ Հերոսը, մարտիրոսը վերածնուելու

էր եւ նոր կեանք ապրելու։ Ստորգետնեայ դամբարանը տեղադրուեց եկեղեցու գլխաւոր խորանի ստորոտում (Հռիփսիմէ, Գայանէ, Շողակաթ), որը ամենահին օրինակներում երբեմն տեղ էր գտնում դմբէթի տակ (Էջմիածին, Ե. դար)։ Դամբարան–դմբէթ ուղղաձիգ առանցքի միջեւ ընկած էր պատարագարանը (հեթանոսների բագինը), այսինքն մարդը վերափոխման խորհրդին մասնակից դարձնելու կեդրոնը։ Այսպիսով, քրիստոնէութիւնը միացրեց կտոնեան եւ օլիմպիական պաշտամունքների էականը, կարելի դարձուց հեթանոսական տաճարի, դամբարանների կազմը ժառանգել ու վերամշակել որպէս եկեղեցի։

Աղատ թարգմանութեամբ մէջբերենք Ագաթանգեղոսի յիշատակած Գրիգոր Լուսաւորչի տեսիլքից մի հատուած. «Եւ սիւները իրար միացնող չորս կամարների ամբողջութիւնը, կաթողիկէ եկեղեցիի համայնքի հաւասարութիւնն է։ Եւ դմբէթը նման երկնային քաղաքին, հաւաքման վայր է երկնքի թագաւորութեան միաբանութեանը» (2)։ Այս պատկերը ներկայացնում է ատրուշան։ Սասանեան շրջանից (Գ.–Է. դդ.) մեզ են հասել մօտ 50 մեհեան. նրանց ընդհանուր կերպարը, հետեւեալն է՝ քառանիստ յատակագիծ, անկիւններում տեղադրուած չորս աղատ սիւներ, նրանց կապող կամարներ, որոնց վրայ տրոմպերի փոխանցումով յենուած դմբէթ եւ այս ամբողջութիւնը պարփակւում է շրջասրահի մէջ։

Լուսաւորչի տեսիլքը տաճարի ամէն մի տարրին տալիս է յատուկ նշանակութիւն. կամարը՝ մարտիրոսները, տրոմպերը՝ գետեր (փոխանցում), թմբուկը՝ երկնային բանակը, դմբէթը՝ գահը։

Չորս կամարների վրայ յենուող դմբէթ–երկնային քաղաքը կեդրոնում բագին–խորանը, կեդրոնակազմ եկեղեցիների կորիզը կազմող սրբատեղին է (ցելլա) որի շուրջը խաչաձեւ ու երբեմն անկիւնագծով տեղադրուած միւս սենեակները նման են ատրուշանի շրջասրահին։ Արդ, Լուսաւորիչը նոր իմաստաւորում տուեց հեթանոսական տաճարից ժառանգուած այդ ձեւին, ու ինչ կարեւոր է՝ պաշտօնապէս հաստատեց նրա իրագործումը։

Տեսիլքի ճարտարապետական մեկնաբանութիւնը համընկնում է Էջմիածնի (Ե. դարի վերակառուցում) կաթողիկէի կերպարին, ինչպէս եւ այդ տիպի հետագայ զարգացման կարեւոր օղակը կազմող Բագարանի կաթողիկէին (624–631 թթ.)։

Եթէ ձեւերի միջեւ գոյութիւն ունեցող այս յարակցութիւնները ձեւաբանական իմաստով ընդունելի են, ապա հայը պահպանեց

---

2) Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս 1914, էջ 380–381։

հեթանոսական մեհեանի կերպարը, բխեցրեց եկեղեցու կազմը տաճարից եւ ոչ թէ մարտիրիումներից, այսինքն՝ դամբարաններից։ Կտոնեան հաւատքի համեմատութեամբ դերիշխեց Օլիմպիականը։ Այս մեկնաբանութիւնը, անշուշտ, բացարձակ չէ, սակայն Գրիգոր Լուսաւորիչի տեսիլքում պատկերուած եկեղեցու էութեան եւ կերպարի (թէկուզ նշանաբանական առումով) իմաստալից վերահաստատումն է։

Ե.–Է. դարերում Հայաստանում մշակուեցին բազմաթիւ կեդրոնակազմ եկեղեցիներ՝ քառանիստ, վեցանիստ, ութանիստ, շրջանաձեւ, հասնելով մինչեւ ծալքաւոր պատերի յատակագծին (Իրինդ, Զօրավար, (Է. դ.) եւ յատակպէս ԺԱ. դարի Հովիւի եկեղեցին)։ Զեւաբանական իմաստով քառակուսին եւ շրջանակը երկրաչափական պարզ պատկերներ են։ Ցենակէտ ունենալով կեդրոնը, նրանց մէջ ներգծւում, բայց եւ նրանց միջոցով շարադրւում են կեդրոնակազմ եկեղեցիների բոլոր տիպերը (ծալքերով պատերի թեման տարբեր է՝ Անիի Հովիւի եկեղեցու առաջին յարկի, կեդրոնից ճառագայթող վեց ջիլերը նրանց յենակէտերին համընկնող պատի հատուածները նախապատկերում են աւելի սիւն–հեծած համակարգին, քան լայնօրէն կիրառուած պատ–ծածկ կառոյցին)։ Այս շէնքերն ունեն թմբուկի վրայ յենուած դմբէթի ծածկ։ Ծաւալների, մակերեսների համակարգը կանոնաւորուած է ուղղաձիգ կեդրոնական առանցքի շուրջը։ Առանցքը շէնքի մասերի դասաւորումը, կազմաւորումը, հետեւաբար ճարտարապետական կերպարը բնորոշող, կայականօրէն ուժերի բաշխումը հաւասարակշռող իտէալ գիծն է։ Առանցքը ձեւակերպում է երկրաչափական պատկերը, առարկայացնում մարդու մասնակցութիւնը, եւ որպէս այդ՝ կեդրոնում կանգնած դիտող, իրեն է ենթարկւում սիմետրիկ դասաւորուած ծաւալներին։ Նշենք նաեւ, որ ամբողջ միջնադարի շրջանում, Եւրոպայում դերիշխեց բազիլիկան, կեդրոնակազմ շէնքերը մի քանի եկեղեցիներից զատ, մեծ մասամբ մկրտարաններ են։ Իսկ Հայաստանում տիրապետեց կեդրոնակազմ դմբէթածածկ շէնքը. բազիլիկան վերածուեց «գրմբէթաւոր սրահի»։ Այսքանից կարելի է մակաբերել հայ միջնադարի տեսական մտածողութեանը յատուկ երկու յատկանիշ՝ ուղղաձիգութիւն եւ կեդրոնակազմութիւն, որոնք բնորոշ են լինելու մարդակեդրոն հայեցողութեանը, դառնալու են վերածնունդի ժամանակ մինչեւ ճանաչողութեան դիտակարգի աստիճան մշակուած «հեռանկարային» արուեստի նախադրեալներ։ Ճարտարապետական ձեւերի կեդրոնականութեան դաղափարը, նրանից մարդակեդրոն հայեցողութեան անցումը, հայը, վաղագոյն շրջաններից, դարձրել էր

առարկայացուած իրողութիւն։ Եւ դարմանալի չթուայ, եթէ այս հարցում առնչութիւններ դտնուեն Լէոնարտոյի, Նոյնիսկ Ալպերտիի (Դե ռէ Էդիֆիկատորիա, գիրք 7–րդ, Ֆլորենցիա 1560 թ.) ու հայ միջնադարեան տեսական մտածողութեան միջեւ։ Ճարտարապետութեան ընդհանուրում, Լէոնարտոյի էսքիզները ցոյց են տալիս, թէ ինչպէս նրա հետաքրքրութիւնը յատկապէս կեդրոնացուած էր շարունակ կրկնուող մի քանի թեմաների շուրջը։ Սրանցից ամենակրեւորը կեդրոնակազմ եկեղեցական շէնքն է։ Այդ դծագիրներից յատկապէս նկատի ունենք Աղբերնհայմ ձեռագրերից հմ. 2037, 3–րդ թերթի դծագիրը՝ քառանիստ յատակագիծ, դլխաւոր առանցքների ուղղութեամբ կողմերից դուրս բացուող չորս աբսիդներ, մէջտեղում դմբէթակիր չորս ադատ մոյթեր։ Այսինքն՝ Բագարանի թեման։

Ընդհանուր դծերով, Բագարանը (624–631 թթ.) ունի հետեւեալ յատակագծային կազմը՝ համակեդրոն, մէկը միւսի մէջ տեղադրուած քառակուսիներ, արտաքին քառակուսիի երկայնքով ընթանում է շէնքը պարփակող պատը, որը դլխաւոր առանցքների ուղղութեամբ բացւում է դէպի դուրս, կազմելով չորս աբսիդ։ Ներքին քառակուսու անկիւններում տեղադրուած են դմբէթակիր չորս ադատ մոյթեր։ Կեդրոնական քառակուսու կողմը ունի 5,45 մեթր (5,48 մ.) երկարութիւն, արտաքին քառակուսու ներքին կողմը՝ 11, 15 մ. (11,70 մ.), խաչուող թաղերի դագաթի բարձրութիւնը հասնում է 11,30 մեթրի, դմբէթի դմբէթակիր օղակը սկիզբ է առնում 12,10 մեթրից։

Մինչեւ եզրապատերը հասնող, դիտողի համար աբսիդների խորքից ընկալուող թաղերի ծածկը, խաչման հատուածում վեր սլացող դմբէթի հետ, կազմում են միահամուռ ամբողջութիւն ու դերիշխում է ներքին տարածութեան վրայ, արտաքուստ դրսեւորւում են ամբողջ կառոյցի էութիւնը, նոր ձեւ տալիս շէնքին։ Աբսիդների ծածկի համեմատութեամբ թաղերի բարձրանիստ լինելը, դմբէթով պսակուած վերնաշէնքին տալիս է իւրայատուկ շեշտաւորում։ Այս մտայղացումը, աւելի քան հայկականին հարազատ դարձաւ արեւմտեան ճարտարապետութեանը։ Մի այլ յատկանիշ բագարանատիպ շէնքի կեդրոնում տեղադրուած, նրա հետ մարմնացած քառամոյթ դմբէթածածկ ցելլան։ Շէնքի այս հատուածը, Աղաթանդեղոսի յիշատակած Գրիգոր Լուսաւորչի տեսիլքում, ստացել էր յատուկ նշանակութիւն եւ ինչպէս նշեցինք՝ պահպանուել էր հեթանոսական տաճարի կերպարը ու փոխանցուել քրիստոնէականին։ Արդ, այդպիսի կազմ ունեցող ցելլան, հնարաւորութիւն է տալիս բարձրացնել մեծ ծաւալի եկեղեցիներ (Մրեն, Օձուն, Գայանէ Զ.–Է.–րդ դդ)։ Այս

իւրայատկութիւնը կարեւոր է, քանի որ արեւմուտքի հասկացութեան համար, ծաւալը կապուած է մեծ չափի հետ։ Այնտեղ չափանիշը տարբեր է, նրա բաղադրեալները բազմազան։ Շինարարական տեխնիկան փաստացիօրէն զարգացման սահմանում չունի, ձգտում է յանդգնութեան դադաթնակէտին։ Այս հարցում համոզուելու համար, բաւական է իրար համեմատել հայկական գմբէթների եւ արեւմտեան գմբէթների տրամագծերը։ Ճարտարապետական կառոյցներում, սակայն, կարեւորը կերպարի կարողական հնարաւորութիւններն են. օրկանական յատկութիւնները օժտուած են զարգանալու ունակութեամբ։ Բաղարանի օրինակում մոյթերը աւելի մօտ են տեղադրուած անկիւններին, քան Էջմիածնի Կաթողիկէի կառուցուածքում։ Մոյթը եւ անկիւնապատը միասնացած, դառնում է ամբողջական յենարան եւ խաչուող թեւերի պատերի մասնակցութեամբ կազմում գմբէթը կրող հաստատուն ներքնաշէնք։ Նման սիստեմը հնարաւորութիւն է տալիս միացնել խաչուող թաղերի համակարգը գմբէթի հետ, կառուցել աւելի լայն գմբէթակիր օղակ, հետեւաբար մեծացնել գմբէթի տրամագիծը, եւ դրանով իսկ զարգացնել վերնաշէնքը։

Ճարտարապետական ձեւերի արտահանումը կատարւում է տարբեր ճանապարհներով. շարժառիթներից մէկը Վեստկոթերի գաղթն է արեւելքից արեւմուտք։ Հիւսիսային Կովկասում նրանց ներկայութեան մասին վկայում է Մովսէս Խորենացին։ Այդ վայրերից ու Սեւ ծովի ափերից Դ. դարի վերջերին Վեստկոթերի գաղթում են դէպի արեւմուտք, մէկ ճիւղը հաստատւում է Իտալիա (Օստկոթեր), միւսը հարաւային Ֆրանսա, ընտրելով Դուլուզը որպէս մայրաքաղաք։ Օրրիկ թագաւորի օրօք (466–484 թթ.) նրանք նուաճում են Սպանիան։ Վեստկոթերի գլխաւոր քաղաքները եղել են՝ Պարսելոնան, Դոլետոն եւ Մերիտոն. նրանց իշխանութիւնը տեւեց մինչեւ Սպանիայի նուաճումը արաբների կողմից (711 թ. Գորտովան հռչակւում է էմիրութեան մայրաքաղաք)։

Պատմութեան մէջ, Վեստկոթերը թողել են եկեղեցիներ, պալատներ, քաղաքներ, կառուցող ժողովրդի յիշատակ։ Այդ շէնքերից սակայն, մեզ հասել են սակաւաթիւ նմուշներ։ Դրանցից մեզ հետաքրքրողը հետեւեալն է՝ Կատալոնիայում մինչ օրս լաւ պահպանուած Ս. Միգուել եկեղեցին (Է. դ.) քառակուսի ծաւալով պարփակուած խաչաթեւ տարածութիւն, արեւելեան մասը վերջանում է աբսիդով, թեւերը թաղածածկ են, կեդրոնական հատուա-

ծում վեր է խոյանում տրոմպերի փոխանցումով գմբէթը։ Անկիւնները տեղադրուած են չորս փոքր սենեակ, թաղերը եւ աբսիդը Եպիսկոպոս Թէոտուլֆը, իր երկրի Ս. Միքուել Տերբասա եկեղեցին բնորոշող մի շարք տարրերը կրում են արեւելքի ազդեցութիւնը։

Ֆրանսա ապաստան գտած, կոթ ծագում ունեցող, Օրլէանի Եպիսկոպոս Թեոտուլֆը, իր երկրի Ս. Միքուել Տերբասա եկեղեցու նմանութեամբ, կառուցեց Օռլէանում Ժերմինի-տէ-Պրէ (806 թ.) կաթողիկէն։ Մէջբերենք Ֆրանսիացի երկու արուեստաբանների կարծիքը։ Պ. Լավեդան գրում է. «Կեդրոնակազմ այս եկեղեցու կերպարը Ֆրանսայում հետագայ զարգացում չունեցաւ, Ժերմինի տրոմպերի վրայ յենուող գմբէթը կառուցողական նորութիւն էր մեզ մօտ» (4)։ Հ. Ֆոսիյոնը աւելի բացայայտ է իր արտայայտութեան մէջ. Սպանիայի՝ հիւսիսում Ս. Միքուել տէ Լինեոն եւ Ժերմինի-տէ-Պրէն «մէկը եւ միւսը անկասկած կապուած են անծանօթ նախատիպի, սա էլ իր հերթին ներշնչուած է արեւելեան մոտելից՝ անկասկած հայկական կաթողիկէ էջմիածնից, վերակառուցուած 618 թուին» (5)։

Բաղարանատիպ եկեղեցու տարածման մի այլ ճանապարհը ընթացաւ Բիւզանդիայի ուղղութեամբ։ Ցիշենք նախ եւ առաջ Ֆոտիոյի եւ Կոստանտին Միրանածին կայսեր (երկուսն էլ ունեն հայկական ծագում) կողմից նկարագրուած այսօր գոյութիւն չունեցող պալատական «Նեա» (նոր) եկեղեցին։ Մէջբերենք յոյն գիտնական Ջ. Տիմիդրոկալլիսի տողերը. «Նկարագրութիւններից հետեւում է, որ եկեղեցին ունէր ներդրած յունական խաչով յատակագիծ, անկիւնային սենեակներ, գմբէթակիր, չորս աղատ մոյթեր։ «Նեա»ն կառուցուել է 868 թ. եւ պէտք է նկատել իբրեւ Եւրոպայում կառուցուած այդ տիպի առաջին եկեղեցին» (6)։ Նոյն հեղինակը իր աշխատութեան վերջում գրում է. «Միլան քաղաքի Ս. Սարդիրոյի (868–881 թթ.) ճարտարապետական տիպը ծաղել է Հայաստանում (Էջմիածին, Բաղարան) եւ Փոքր Ասիայի միջնորդութեամբ փոխանցուել է թէ՛ Ցունաստանին, թէ Արեւմուտքին։ Փոխանցումը տեղի է ունեցել Թ. դարի վերջերին, այսինքն այն շրջանում, երբ առկայ են այդ տիպին պատկանող բազմաթիւ օրինակներ՝ Ս. Սա-

---

3) P. Lavedan, *Histoire de l'Art*, Paris, 1944, p. 32.

4) Նոյնը, էջ 79:

5) H. Focillon, *Art d'Occident*, Paris 1947, pp. 17-18.

6) G. Dimitrocallis, *Osservazioni sull'architettura di san Satiro e sull'origine delle chiese tetraconche altomedievali, Milano 1969*, p. E. Arslan, Storia di Milano, 1954.

դիրոն (Միլան), Ժերմինի-տէ-Պրէն (Օուլէան), Սալոնիկի Պերիս-տերօ եկեղեցին, Կաստրոյի եկեղեցին եւ, անկասկած, մի շարք այլ եկեղեցիներ, որոնք այսօր դոյութիւն չունեն»:

Մի այլ փաստ եւս: Քաղկեդոնեան եռաթեւ թերակղզու արեւելեան եզուստը՝ Աթոսը, 50 քլ. երկարութեամբ ձգւում է Եղէական ծովի մէջ, հարաւ-արեւելեան մասում բարձրանում է Աթոս լեռը (2033 մ.), Հոմերոսի, Էսկիլեսի յիշատակած Սուրբ լեռը (Ակիոն օրոս): Այսօր Աթոսը Յունաստանի ինքնավար մարզ է. ուղղափառ միաբանութեան տիրոյթ, կազմուած՝ ժայռերի մէջ ընկած 20 ամրացուած վանքերից: ԺԳ. դարում վանքային միաւորների թիւը հասնում էր 300-ի: Վաղ միջնադարում քրիստոնէական ճգնակեցութեան կեդրոններից էր, երկու անգամ (830 թ.-ին եւ 866 թ.-ին) արաբներից ասպատակուած:

Աթոս լեռան վրայ վանական կեանքը սկիզբ առաւ երբ հայազգի ազնուական ընտանիքի դաւակ, կայսր Նիկեփոր Փոկասի (963-969 թթ.) խորհրդով, նրա ազգական Աթանաս Տրապիզոնցին (հետագայում մականուանուած՝ Աթոնացին) Ստուդիոնի Ս. Յովհաննէս վանքում ուսանելուց յետոյ, հաստատուեց Աթոսում: Այնտեղ իր շուրջը համախմբելով կրօնաւորներին, հիմնեց նոր միաբանութիւն եւ կառուցեց Աթոս լեռան առաջին վանքը՝ Մեծ Լաւրան: Սահմանեց վանական կեանքի կանոնադրութիւնը, ստեղծեց մայրաքաղաք Բիւզանդիայի քաղաքականութեանը հաւատարիմ կրօնական կեդրոն, ուր յաջորդաբար հաւաքուեցին կայսրութեան բոլոր երկրներից եկող՝ յոյն, հայ, սլաւոն, վրացի, ասորի կղերականներ:

Մեծ Լաւրան, կառուցուած 963-970 թթ., տեղադրուած է Աթոս լեռան արեւելեան ծայրամասում եւ նուիրուած է նրա հիմնադիր՝ Աթանաս Աթոնացուն: Վանքը, նման միջնադարի ամրոցապատ ուաններին, շրջապատուած է աշտարակաւոր պարիսպներով, նրանց հարած, դէպի բակը բացուող օժանդակ շինութիւններով, որոնք կազմում են՝ մասնատուած, ամբողջ երկայնութեամբ ձգուած հողամասի պարագծով ընթացող պաշտպանական գօտին: Ներքին աղատ տարածութիւնում եւ դլխաւոր առանցքի երկարութեամբ տեղադրուած են դլխաւոր եկեղեցին, նրա առաջը բացուող կեդրոնական երկու սիւներով վեց հատուածների բաժանուած նախասրահը եւ հիւսիսային ու հարաւային կողերին հպած, նախասրահից մուտք ունեցող, դլխաւոր եկեղեցիի տիպով կառուցուած երկու մատուռները: Աւելի ուշ շրջանի դործ է համարւում երեք եկեղեցիների արեւմտեան հատուածի ամբողջ երկայնքով կառուց-

ուած կամարաշար նախամուտքը, որի դիմաց գտնւում է սուրբ Ջրի աղբիւր (Ֆիալա) եւ խաչաձեւ յատակագծով՝ սեղանատունը։ Պաշտամունքային շէնքերը մէկ առանցքի երկայնքով տեղադրելը եւ նրանց դասաւորումը հաստատող սկզբունքները կապուած են յունական եկեղեցու ծիսականութեանը, հետեւաբար չեն առնչւում մեր նիւթի հետ։ Մեզ հետաքրքրում է դլխաւոր եկեղեցին՝ Կաթոլիկոնը։ Ներքին քառակուսի եռակոնք տարածութիւն, արեւմտեան աբսիդը հաւանաբար վերացուել է նախասրահի կառուցման ժամանակ, այս պատճառով Ց. Ստրժիկովսկին, Ջ. Տիմիդրոկալլիսը դասում են եկեղեցին քառակոնք կառուցուածքների խմբում։ Կեդրոնական քառակուսիի ծայրերում տեղադրուած են չորս, քառակուսի, ազատ մոյթեր։ Գմբէթը տրոմպերի փոխանցումով վեր է խոյանում, իշխելով ներքին տարածութեան վրայ։ Ներքին ճեւը իր ամբողջութեամբ ընթեռնելի է արտաքուստ, բացառութիւն են կազմում արեւելեան ճակատի դլխաւոր խորանը եւ երկու աւանդատները, որոնց աբսիդներն արտաքուստ եռանիստ են։

Դլխաւոր եկեղեցու հիւսիսային եւ հարաւային արտաքին պատերին կցուած են մինչեւ աբսիդները հասնող մէկական մատուռներ։ Ներքին տարածութիւնը քառակուսի է, ունեն գմբէթակիր չորս ազատ սիւներ։ Մատուռների երկրորդական նաւերը վերջանում են պատերի հաստութեան սահմաններում իրականացուած աբսիդներով, մինչդեռ կեդրոնական աբսիդն արտաքինից կրկնում է ներքին կիսաշրջանի ձեւը։ Մատուռների համեմատութեամբ աւելի ներս տեղադրուած դլխաւոր եկեղեցու եւ արեւմտեան ճակատի ամբողջ երկայնութեամբ ձգուող պատի միջեւ ընկած տարածութիւնը ծառայում է որպէս նախասրահ, ուր բացւում են մատուռների աւելի փոքր նախասրահները։

Աթոսի վանքերի եկեղեցիները՝ Վատոպեդին (Ժ. դարավերջ); Կիլինդարին (1197 թ.), նոյն շրջանին պատկանող Իվիրոնը, եւ ուրիշները, այսինքն Բալսի ցուցակում նշուած ութը եկեղեցիները, բոլորն հիմնականում կրկնում են Մեծ Լավրայի Կաթոլիկոնի յատակագիծը, որի համեմատութեամբ տարբերութիւնները փոքր են՝ երկարած է դլխաւոր խորանի առաջ գտնուող տարածութիւնը, եւ թողնում է առանցքի ուղղութեամբ աւելի ձգուած լինելու տպաւորութիւն, մոյթերը փոխարինուած են սիւներով։ Այս հանդամանքը նշանակալից է, միայն Մեծ Լավրայի դլխաւոր եկեղեցու գմբէթի յենարանները քառակուսի մոյթեր են։ Հայազգի Աթանաս Աթոնացին լաւ էր յիշում Էջմիածինը եւ նրանից հետեւած Բազարանը, որը նախատիպ ծառայեց իր կառուցած եւ նրանից հետեւած Աթոս լերան ութը եկեղեցիների համար։



Վաղարշապատի Ս. Էջմիածին կաթողիկէն (Ե. դ.):



Ժերմինի-տէ-Պրէ (Թ. դ. սկիզբ), կառուցեալ է Իսպանիայից ներգաղթած, վեսթ-կոթ ծագում ունեցող Օրլեանի եպիսկոպոս Թէոդուլֆը:



Լէոնարտո տա Վինչի, կենդրոնակազմ շենքի գրչագիծ Աղրերնհայմ կոդեկս Բ, թերթ 57:



Բագարան՝ Ս. Յովհաննէս Մկրտչի եկեղեցին, կառուցուած 621–628 թթ. (այսօր հիմնայատակ քանդուած):



Սան Սատիրոյի մատուռը, Միլան, (868–881 թթ.),
վերակազմուած Բրամանտէի կողմից 1482 թ.:



Մեծ Լարվան, Աթոս լեռ., կառուցել է հայազգի Աթանոս Աթոնացին
963–1004 թթ.:



Կիլանդար կաթողիկէն, Աթոս լեռ, կառուցել է 1197 թ. սերպ իշխան Ստեփան Նեմանեա, վերակառուցուել՝ 1293 թ.:





Լէոնարտօ տա Վինչի, ուրը մատուռանի եկեղեցիի նախագիծ: Աղբերնհայմ կոդեկս հմ. 2037, թերթ 5:



Լեոնարդո տա Վինչի, քառաբսիդ, գմբեթակիր չորս ազատ մոյթերով եկեղեցիի նախագիծ: Աղբերնհայմ կոդեկս հմ. 2037, թերթ 3:

❖

Միշտ չէ, սակայն, որ օտարամուտ ձեւը հարազատ է դառնում այդ երկրի ճարտարապետութեանը: Պ. Լաւեդանից, Հ. Ֆոսիյոնից մէջբերուած տողերը պարզ ասում են այդ մասին: Բազմաբանտիպ կառուցուածքների զարգացումը կատարուեց միայն Վերածնունդի ժամանակ: Ուստի «օտարամուտ ձեւի» իւրացման, հետագայ զարգացման հարցը, կապուած է այլ խնդիրների: Դրանցից կարեւորագոյնը, մեր կարծիքով, տեսական եւ գեղագիտական մտածողութիւնն է:

Այս իմաստով Վերածնունդը շարունակեց զարգացնել միջնադարի արուեստի գիտական ըմբռնումը: Միջնադարում, երկրաչափութիւնը՝ առարկաները պատկերելու, նրանց ներքին կարգը մեկնաբանող ճանաչողութիւնն է: Որպէս գիտակարգ նա կազմում է արուեստների մեթոդական հիմքը, ստեղծագործութեան սկիզբ ու խթանը, շինարարական տեխնիկայի հրահանգը, կերպարի գեղագիտական ընկալումը: Երկրաչափականացնելով տարածութիւնը, տեսողութիւնը դարձել էր առարկաները ճանաչելու փորձնական ունակութիւն, իսկ տեսանկիւնը կապ էր երկրաչափական սիստեմի եւ մարդու միջեւ: Մարդը որպէս կեդրոն, Վերածնունդի մտքի էական դրոյթներից է, որի հետ կապուած է «հեռանկարի» զարգացումը:

Մոնումենտալիզմը, կեդրոնականութիւնը, ուղղաձիգութիւնը ճարտարապետութեան դասական մտքի էական յատկանիշներ են, եւ նպաստեցին կեդրոնակազմ կառուցուածքի տարածմանը:

Ինչպէս արդէն նշեցինք, Ե.—ԺԲ. դարերի արեւմտեան պաշտամունքային շէնքերից միայն մկրտարաններ են կառուցուած կեդրոնակազմ տիպերի հիմքերով: Շատ աւելի ուշ, այսինքն ԺԵ. եւ ԺԶ. դարերում, զմբէթի, բայց առաւել եւս զմբէթաւոր շէնքի կազմը, դարձաւ իտալացի ճարտարապետների հիմնական խնդիրը, իսկ խաչաձեւ յատակագծով, զմբէթակիր չորս ազատ մոյթերով շէնքը, առաջին անգամ գծագրուեց Լէոնարտոյի կողմից: Սոյն տիպի Ցունատանի օրինակները՝ Սթոս լերան Մեծ Լավրան, Վատոպեդին, Կիլինտարը, Սալոնիկի Պերիստերոն եւ մի շարք այլ եկեղեցիներ իրագործուել են Թ.—ԺԲ. դարերում (Միլանի Ս. Սատիրոն Թ. դարի կառուցուածք է): Այսքանից հետեւում է, որ արեւմուտքի ճարտարապետութեան մէջ, սոյն տիպը մօտաւորապէս երեք դար ընդհատումից յետոյ, նորից գրաւեց ճարտարապետների հետաքրքրութիւնը, թէկուզ եւ ելակէտ ընդունելով Լէոնարտոյի հնարած ձեւը:

Հարցը միայն փոխանցումների խնդիրը չէ։ Մի քանի դար շարունակ խաչաձեւ յատակագծով դմբէթածածկ քառամոյթ շէնքի կերպարը հետաքրքրութիւն չառաջացրեց արեւմուտքում, կամ մատնուեց մոռացութեան։ Տէ Անջելիս տ՝Օսսան նկատի ունենալով Միլանի Ս. Սաղիրոն, անուանում է այդ մատուռը «օտարամուտ», որը եւ, դարեր շարունակ, Իտալիայում եղաւ այդ տիպի միակ օրինակը։

Մեզ թւում է անբաւարար, երբ ձգտում ենք, օրինակ, Բագարանատիպ եկեղեցիների արեւմուտքում գտած յաջողութեան հարցը պարզել եկնելով միմիայն տիպաբանական դրոյթներից։ Առանձնայատուկ նշանակութիւն ունեցող, իմաստով մասնաւորուած, ուրոյն հասկացութեամբ բնորոշուած ճարտարապետական ձեւի զարգացումը որոշ շրջանում ընդհատւում է, ապա՝ հետագայ դարերում, նորից յայտնւում դրաւելով ճարտարապետների հետաքրքրութիւնը։ Պատմութիւնը ցոյց է տալիս, որ տարբեր շրջափուլերում կատարուած ձեւերի ընտրութիւնը, նրանց զարգացումը առնչւում է այդ շրջաններին յատուկ ձեւաբանական հասկացութեան հետ։ Այսպէս՝ միջնադարում նշանաբանական իմաստաւորումով որոշակիօրէն սահմանուած երկրաչափական պարզ պատկերներ, դմբէթածածկ քառակուսին, ուղղաձիգ առանցքի շուրջը կազմակերպուած ձեւերը, յատկապէս հայկական ճարտարապետութեան դասական ոգով կերտուած շէնքերը, շեշտում են կեդրոնականութեան դաղափարը։ Բայց հենց այս մտքի շուրջը Վերածննդի ժամանակ կատարուեց ամենահիմնական յեղաշրջումը՝ կեդրոնականութեան հասկացութիւնը կորցրեց կրօնական իմաստը, մարդն իր ամբողջ հասակով կանգնեց տիեզերքն իրեն ենթարկող, այսինքն՝ բոլոր ուղղութիւններով հաւասարաչափ ճառագայթող պատկերի կեդրոնում։ Տարածութեանը տրուեց գեղագիտական նոր իմաստաւորում, անցեալի դասական արուեստը դարձաւ Դոսկանայի, ապա՝ հռոմէական հումանիզմի իտէալը։

Վերածննդի միտքը ժառանգելով դասական շրջանի եւ միջնադարի մտածողութիւնները, ընթացաւ անկախ, բոլորովին այլ ուղղութեամբ։ Նոյնը շինարարութեան բնագաւառում՝ Միքելանջելոյի Ս. Պետրոսի կառուցուածքը շարունակում է հռոմէական իրագործումների (Դոմուս Աուրիա, 65–70 թթ., Միներվա Մեդիկա, Դ. դ.) Ֆլորենցիական–լոմպարտական աւանդութեան ինչպէս եւ Բրունելեսկիի, Պրամանդէի, Սան Գալլոների մշակած շինարարական սիստեմների հիմունքները։

Մոնումենտալիզմը շեշտաւորում է ձեւի հռետորականութիւնը, կապուած է տարածութեան նշանաբանական պատկերացումին եւ, առանցքների միջոցով, օգտագործելով չափանիշների հակադրութիւններ, արտայայտում է սոցիալական իրականութիւնը, քաղաքական, կրօնական իշխանութիւնը։

Ճարտարապետական ձեւերի, շինարարական փորձառութիւնների, տեսական մտածողութիւնների հարուստ ժառանգութիւնը, դտնելու էր այդ արժէքների համադրած արտայայտութիւնը։ Գտնելու էր կեդրոնականացնող, հետեւաբար բոլոր ուղղութիւններով ճառագայթող, գլխաւոր առանցքներով դասաւորուած, Հռոմի քաղաքա-եկեղեցական միշտ աւելի ընդարձակող իշխանութեան մեծութիւնը կերպարող, բայց յատկապէս Վերածնունդի մարդու աշխարհընկալումը, հումանիզմը արտայայտող ճարտարապետական ձեւը։ Իսկ ձեւը, ինչպէս նշել ենք, կապուած է արխետիպերին, յարատեւում է որպէս իմաստներով հարուստ երկրաչափական գծապատկեր, ձեւն առաջացնող կառուցողական կորիզ։ Արուեստի գործում ներփակ սիստեմը նրա արտաքինում ծաւալուող տարրերը միաձոյլ են, երբ արտայայտչական, ինչպէս եւ կառուցողական միջոցները շարադրւում են սիստեմի նախադրեալների հիմունքներով։ Իսկ սիստեմն օժտուած է նախաձեւը, այսինքն՝ արխետիպը պատկերելու կարողական արտայայտչականութեամբ։ Եւ երբ դալիս է պատմական ժամը, ստեղծւում են սոցիալական բարենպաստ պայմանները, կարելի է իրագործել մեծ համադրութիւնը։ Բագարանը, մեր կարծիքով, եղաւ այդ համադրութիւնը թելադրող սկզբնաձեւերից մէկը։ Բագարանը եղաւ կորիզային այն կերպարը, որի շուրջը եւ նրա կազմում հաստատուած կարգով, Վերածնունդի ճարտարապետները կերտեցին կեդրոնակազմ, չորս աղատ մոյթերի ու չորս խորանների համակարգով կառուցուած գմբէթածածկ եկեղեցիներ։

CONCERNING THE PROPAGATION OF THE BACCARAN ARCHITECTURAL STYLE IN EUROPE

ARMEN ZARIAN

After the advent of Christianity to Armenia, a great number of temples, dedicated to the new religion, are built in two different architectural styles, namely, the basilica, and the vaulted or convex. Of the latter type we have the Etchmiadzin (reconstructed in 618) and the Baccaran (erected, 624-631) temples. Armenians preserve the architectural form of their pagan temples in the edifice of their churches. In the course of time, the vaulted style becomes dominant. This idea of centralism in architecture leads to the anthropocentric conception, which gives the Armenians an objective outlook even in ancient times. A correlation is discerned here between Armenian thought and that of Leonardo da Vinci, whose sketches demonstrate his interest in centralized themes. The idea of architectural centralism travels to the West through different channels, one of which is the moving of the Visigoths from the East to the West. The churches the West Goths build in France indicate the existence of an archetype which bears the stamp of inspiration of an Eastern model, indubitably that of Etchmiadzin. The convex architectural style of Baccaran moves to the West also through Byzantium. Atanas of Aton, at the request of the Emperor, Nicephorus Phocas (963-969), both of Armenian origin, establishes abode in Atos, starts an order, and builds the temple of the Great Lavra, whose plan and style are those of Etchmiadzin and Baccaran. For some time, the convex architectural style is forgotten. During the Renaissance, however, as a reflection of the thinking of the time, the building of churches of this style is resumed in Europe.